ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 հուլիսի 2019 թվականի N 72

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՆԵՐՄԱՐԶԱՅԻՆ ԵՐԹՈՒՂԻՆԵՐՈՒՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏՈՎ ՈՒՂԵՎՈՐՆԵՐԻ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 24-Ի N 1 ՆԻՍՏԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի օգոստոսի 16-ի «Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցույթի անցկացման մասին» N 762 որոշմամբ հաստատված կարգի 62-րդ կետով և համաձայն ՀՀ Սյունիքի ներմարզային երթուղիներում ընդհանուր օտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցույթային հանձնաժողովի 2019 թվականի հուլիսի 24-ի նիստի N 1 արձանագրության՝

ո ր ո շ ու մ ե մ.

1. Հաստատել Սյունիքի մարզի ներմարզային երթուղիներում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցույթային մարզային հանձնաժողովի 2019թվականի հուլիսի 24-ի N 1 նիստի արդյունքները՝ համաձայն հավելվածի:
2. Կապանի տարածաշրջանի ներմարզային «Կապան-Սյունիք» միկրոավտոբուսային երթուղու սպասարկումը ժամանակավորապես երկարաձգել մինչև 2019թվականի դեկտեմբերի 25-ը:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

26.07.2019

X

ՀՈՒՆԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

Подписано: POGHOSYAN HUNAN 4005640117

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Հ.Պողոսյան

2019թ.հուլիսի 25
ք. Կապան

Հավելված
ՀՀ Սյունիքի մարզպետի
2019 թվականի հուլիսի 25-ի N 72 որոշման

Արձանագրություն N 1

ՀՀ Սյունիքի ներմարզային երթուղիներում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մարզային մրցութային հանձնաժողովի

24 հուլիսի 2019 թ. ք. Կապան

2019 թվականի հուլիսի 24-ին կայացավ ՀՀ Սյունիքի ներմարզային երթուղիների ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության ՀՀ Սյունիքի մարզային մրցութային հանձնաժողովի նիստ:

Նիստին մասնակցում էին հանձնաժողովի 2 անդամներ և նիստը վարում էր հանձնաժողովի քարտուղար Ս. Աղաբեկյանը:

Օրակարգում – ՀՀ Սյունիքի մարզի Կապանի տարածաշրջանի ներմարզային՝ <<Կապան-Սյունիք>> միկրոավտոբուսային երթուղու սպասարկման ժամկետը երկարաձգելու մասին:

Լսեցին - Քանի որ, լրանում է <<Վաչագան-Նավասարդ>> ՍՊԸ-ի կողմից սպասարկվող <<Կապան-Սյունիք>> միկրոավտոբուսային երթուղու սպասարկման ժամկետը, ելնելով անհրաժեշտությունից, առաջարկվում է ղեկավարվելով ՀՀ կառավարության 2001 թվականի օգոստոսի 16-ի <<Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտամաքիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցույթի անցկացման կարգը հաստատելու մասին>> թիվ 762 որոշման 62-րդ կետի պահանջներով, մինչև նոր մրցույթի անցկացումն ու դրա արդյունքների ամփոփումը՝ լիազորել <<Վաչագան-Նավասարդ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը ժամանակավորապես իրականացնել <<Կապան-Սյունիք>> միկրոավտոբուսային երթուղու սպասարկումը՝ նախկին մրցույթով արտոնագված և դեռին հիմնագույնի համարանիշ ստացած տրանսպորտային միջոցով:

Հանձնաժողովը որոշեց.

1. Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2001 թվականի օգոստոսի 16-ի N 762 որոշման 62-րդ կետի պահանջները՝ մինչև նոր մրցույթի անցկացումն ու դրա արդյունքների ամփոփումը, լիազորել <<Վաչագան-Նավասարդ>> Սահմանապակ պատասխանատու ընկերությանը ժամանակավորապես իրականացնել <<Կապան-Սյունիք>> միկրոավտոբուսային երթուղու սպասարկումը՝ նախկին մրցույթով արտոնագված և դեռին հիմնագույնի համարանիշ ստացած տրանսպորտային միջոցով:

2. ՀՀ Սյունիքի մարզպետի հաստատմանը ներկայացնել սույն արձանագությունը:

Մրցութային հանձնաժողովի քարտուղար Ս.Աղաբեկյան

անդամ Ս. Ավետիսյան